

ԳԱԶՐ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԳԱՇՏԳԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՆԱՐԱՆՆ Ե

№ 5

30

Վ. ՅԵՅՏԼԻՆ

Շ ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

ՌԱԶՄԱԿԱՆ

ԺԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ

„ԳՆԱԶՐ-ԵՎԻԵՔԻՄ“ ՆԲՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929 թ.

# **ՀՄԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ**

- 1. ԲԱՂԴՍԱՐՅԱՆ.** «Սովորիք ուղղմական  
գործը» . . . . . գինը 25<sup>ֆ</sup> կ.
- 2. ԼԵՏՈՎՅԵՎ.** «Տեխնիկան պատերազմում»  
գինը 13 կ.
- 3. ՊԱՋԸ-Ավիաքիմի ԲՆԻՇՆԵՐԻՆ** կից ուղա-քի-  
միական պաշտպանութիւն խմբակ-  
ներ (ծրագրեր և կաղմակերպչական  
մեթոդական խնդիրներ)» . գինը 10 կ.
- 4. Բանաձևիկեր ՀՄԽՀ ՊԱՋԸ-Ավիաքիմի Հայաս-  
տանյան 2-րդ համապատասխան . գինը 5 կ.**
- 5. ՌՈԶՍՆՈՎ.** «Ինչ և ինչպիս պետք և անել  
մոդելիստների խմբակներում» . գինը 10 կ.

**ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ,  
ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**



№ 5

Վ. ՅԵՅՅԼԻՆ

636.596

Յ

4069.

Ե ԱՂԱՎՆԻՆԵՐԸ Ե

ՌԱԶՄԱԿԱՆ ԺԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ



**ՀԱՅԳՈՂԻԴՐԱՅԻ ՏԳԱՐԱՆ**

**ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ № 2798 Բ.**

**ՊԱՏՎԵՐ № 184**

**ՏԻՐԱԺ 2-000**

## ՓՈՍՏԱՏԱՐ ԱՂԱՎՆԻՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատերազմի ժամանակ զորքերը միմյանց հետ բանակցություններ են ունենում հեռախոսով, հեռագրով, փոստով, լրատարներով և այլն: Բայց այնպիսի դեպքեր են լինում, վոր հնարավորություն չի լինում այդ միջոցներից վորեւ մեկը գործադրելու: Այդ միջոցները չեն գործում կամ հակառակորդը խանգարում է: Այդպիսի դեպքերում մեզ ոգնության է գալիս ռազմական աղավնու փոստը:

Այդ փոստի ելությունը նրանումն է, վոր աղավնիները տեղ են հասցնում զորքերի կողմից ուղարկվող ռազմական զեկուցագրերը հատուկ փոքր խողովակներում, պոչին կամ աղավնու մեջքին ամրացրած հատուկ գրպանի մեջ:

Փոստատար աղավնիների միջոցով հաստատած կապը կարող է աշխատել միայն դեպի մի կողմը, այսինքն դեպի աղավնատունը:


Աղավնին սիրում է իր բունը և վորտեղից ելնրան բաց թողնենք, տնհապաղ տուն է վերադառնում:

Բանակում կապի ծառայության համար կիրառվում են հատուկ տեսակի աղավնիներ, վորոնք կոչվում են փոստատար-աղավնիներ: Փոստատար աղավ-

նինների աչդ տեստելը շատ վաղուց և դուրս բերված արհեստական կերպով:

Դաշտավիճակի աղավաճումներից, տուրմոմներից (աղավաճների մի տեսակն է) և որորներից (չաչկա) ամենալավ արուններն ու եգերը ջուկելու և սերելու (խառնելու) միջոցով դիմացկուն, արագ ու խելացի թռչուն և ստացվել:

1-ին նկարի վրա ցույց է տրված փոստատար աղավաճ: Սովորական աղավաճների հետ համեմատած, փոստատար աղավաճն ունի լայն ու լավ զարգացած



Նկ. 1. փոստատար աղավաճ

կուրծք, մարմնին քիփ կալած թևեր, ուղիղ ու լավ զարգացած վոտներ ու կոկ ու մարմնին լավ կալած փետուրներ:

Աղավաճների այլ տեսակներից փոստատար աղավաճն տարբերվում է դեպի իր բունն ունեցած մեծ սիրով. նա իր բունը հիշում է շատ չեբկար ժամա:

նակ, իսկ վորոշ թռչուններ իրենց բունը լերքեք չեն մոռանում: Փոստատար աղավնին շատ սուր տեսողութիւն ունի և մեծ հիշողութիւն՝ վայրի նկատմամբ, նույնպէս և ընդունակութիւն հարկավոր ուղղութիւնը գտնելու իր աղավնատունը վերադառնալու համար: Հասարակ տնային աղավնուն կարելի չեմի աղավնատնից դեպի մլուսը քաշել, սովորեցնել նոր տեղում ապրելու, բայց փոստատար աղավնուն չի կարելի:

Փոստատար աղավնու հենց այդ հատկութիւնների վրա չե հիմնված նրա ծառայութիւնը կապի համար:

Ամեն մեկին հայտնի չե, վոր տարափոխիկ թռչունները, վոր ամեն աշնան թռչում, հեռանում են տաք լերկրներ, դարնանը նորից վերադառնում են իրենց տեղերը, շատ լավ խմանալով ու գտնելով ճանապարհը մի քանի հազար վերստ հեռավորութեան վրա: Այդ ընդունակութիւնը, վոր հատկապէս դարգացած ե փոստատար աղավնու մեջ, մարդիկ սովորել են ոգտագործել, եւ ավելի զարգացնելով այն:

Փոստատար աղավնիների ոգտագործումը կապի համար սկսվել ե շատ վաղուց: Սկզբում աղավնիները գործադրվում եին կապի համար խոշոր առևտրական քաղաքների միջև, քաղաքական ու առևտրական նորութիւնները թերթերին հաղորդելու համար: Առաջներում, լերք հեռագիր ու հեռախոս չկար, գոյութիւն ունեւին հատուկ ընկերութիւններ, վորոնք աղավնու փոստատարութիւն եին հաստատում խոշոր քաղաքների միջև ու նույնիսկ զանազան պետութիւնների միջև, որինակ՝ Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Ռազմական կապի համար փոստատար աղավնի-

ները կիրառվում են ամենահին ժամանակներից ըսկսած, յերբ կապի ալ տեսակի միջոցներ բոլորովին գոյութիւնն չունեյին, իսկ հետո, յերբ հանդես յեկան հեռագիրը, հեռախոսը, աղաւինն նույնպես ավելորդ չհամարվեց: 1870—71 թ. թ. Ֆրանսացիներէ ու գերմանացիներէ միջև յեղած պատերազմի ժամանակ փոստատար աղաւինները ռազմական ծառայութեան մեջ նույնպես մեծ ոգուտ տվին Ֆրանսական բանակին. Փարիզի պաշարման ժամանակ, յերբ հակառակորդը շրջապատել էր քաղաքն ամեն կողմից, միայն աղաւիններն եյին կապ պահպանում պաշարված Փարիզի ու մնացած յերկրի միջև, քաղաքից տեղեկութիւններ բերելով պաշտպանների վիճակի մասին: Այդ ոգուտն աջնքան մեծ էր, վոր Փարիզը պաշարող գերմանական բանակը հատկապես սովորեցրած բազեններ էր պահում՝ աղաւիններին թռիչքի ժամանակ վոչնչացնելու համար:

Մինչև 1914—17 թ. թ. պատերազմը փոստատար աղաւինները ռազմական ծառայութեան մեջ հաճախ կիրառվում եյին բերդերի ու կարևոր քաղաքների միջև կապ հաստատելու համար:

Համաշխարհային պատերազմի ժամանակ սկսեցին փորձեր անել աղաւինները կիրառելու վոչ միայն քաղաքների միջև, ալլև շարժման մեջ գտնվող աղաւինատների միջև: Դրա համար վերցնում եյին մատուցող աղաւիններ, դնում եյին նրանց համար հատուկ պատրաստած շարժական աղաւինատներում, սալակներէ կամ ավտոմոբիլների վրա ու ալդ աղաւիններին աստիճանաբար սովորեցնում եյին շարժական աղաւինատներից աշխատելու: Այդ շարժական աղաւ-

նատները տրվում էին գործամասերին: Այդ փորձերը լավ հետևանքներ ելին ունենում:

Ռազմափոստային աղավնիներն ոտաբերկրյա բանակներում պատերազմի ժամանակ հազարավոր մարդկային կյանքեր են ազատել: Զեկուցագրերը նրանք տեղ ելին հասցնում նուշնիսկ ամենաուժեղ հրետանական ու հրացանային կրակի ժամանակ, չերբ լրատար ուղարկելը հնարավոր չեր, իսկ կապի մյուս բոլոր միջոցները փչացած էին:

Աղավնիները վերադառնում էին իրենց աղավնատները չերբեմն վոտը կոտրած, փորոտիքը դուրս թափած, միանգամայն արուհիվիկ լեղած, բայց և այնպես զեկուցագրերը տեղ ելին հասցնում: Աղավնիները հատկապես մեծ ոգուտ ժն տվել գազային գրոհների ժամանակ:

Պատերազմի ժամանակ Ֆրանսական բանակի ռազմափոստային շատ աղավնիներ պարգևատրվել են ռազմական շքանշաններով: Պատերազմից հետո Փարիզում (Ֆրանսիայի մայրաքաղաքը) ռազմափոստային աղավնիներին մի հուշարձան են կանգնեցրել ի հիշատակ լրատար-զինվորների հազարավոր կյանքեր ազատելու:

Գերմանիայում կապի զորքերի սպանված զինվորների հուշարձանի վրա աղավնիներից մի պսակ է նկարված նուշնիսկ ի հիշատակ սպանված աղավնիների:

Ռազմական կապի համար փոստատար աղավնո ոգտագործովից առաջ նրան վերցնում են աղավնատներից, դնում են հատուկ կողովի մեջ ու տալիս են այն գործամասերին, վորոնցից հարկավոր է զեկուցա-

դիր ստանալ: Յեր հարկավոր ե զեկուցագիրը ուղարկել, գրում են այն հատուկ բարակ թղթի վրա, վերում են խողովակի ձևով, դնում են մետաղե հատուկ փոքր խողովակի մեջ կամ սազի փետուրի կտուրի մեջ և ապա կապում են աղավնու վոտին, ծալահեղ գեպքում խողովակի ձևով վերած գեկուցագիրը կարելի չե ուղղակի կապել աղավնու վոտին, առանց վորեն հատուկ խողովակի:

Ձրդ նկարի վրա ցույց ե տրված վոստատար



Նկ. 2. Աղավնին զեկուցագիրը կապած բաց թողնելուց  
առաջ

աղավնին զեկուցագիրը վոտին կապած, նրան արձակելուց առաջ:

Այդ նույն նկարի վրա ցույց ե տրված, թե ինչպես պետք ե բռնել աղավնուն:

Յ-րդ նկարի վրա ցույց է տրված կարմիր բանակալինը աղավնիների բնակութեան համար վանդակի հետ միասին: Յերբ հարկավոր լինի զեկուցագիր ուղարկել, աղավնուն բաց են թողնում, և նա թռչում է իր աղավնատունը: Աղավնատունն աֆնպես է կառուցված, իոր լերբ աղավնին դալիս է հատուկ պատրաստած մուտքով մտնում, զանգակ է հնչում: Որպեսզի աղավնապահն աղավնու վերադարձը տեսնելով




նկ. 3. Վանդակ բազմափոստային աղավնիների տեղափոխութեան համար հետեակ զորամասերում (4 աղավնու համար)

կամ զանգակը լսելուն պես, բռնում և աղավնուն, զեկուցագիրը հանում է ու անհապաղ տալիս է շտաբին կամ ուղղակի հրամատարին, լեթե նա մոտիկ է, իսկ լեթե հեռու լե, զեկուցագրի բովանդակութիւնը հա-

զորդուամ ե հեռախոսով կամ զեկուցագիրն ուղարկում ե մոտոցիկլետով:

Փոստատար աղավինները շատ արագ ընտելանում են իրենց աղավնապահներին, այսինքն այն մարդկանց, վորոնք խնամում են աղավիններին, չեն վախենում, չերբ նրանց բռնում են ու կուտը ձեռքից են ուտում: Չորրորդ նկարի վրա ցույց ե տրված ամերիկական բանակի դիվիզիայի այդպիսի շարժական աղավնատունը:



Նկ.4. Դիվիզիայի շարժական աղավնատունը ամերիկական բանակում

Նկարի վրա չերեվում ե աղավինների համար պատրաստած մուտքը, թռչելու հարթակը, վորի վրա իջնում ե աղավինն և ռեզերվուսարը, այսինքն ջրամբարը: Աղավինների համար կառուցված մուտքը փակվում ե կախ ընկած ձողիկներով, վորոնք կարող են բացվել միայն դեպի աղավնատան ներսը: Այսպիսով աղավինները կարող են հեշտությամբ ներս մտնել, իսկ դուրս գալ չեն կարող: Աղավնու կողմից ձողիկը հրե-

լուն պես, զանգակը ձայն ե տալիս: Ծ-րդ նկարի վրա  
ցույց ե տրված աղավնու մտնելը աղավնատան ներսը:  
Աղավնին ձողիկը լետ ե գցել ու մտնում ե: Դրա հետ  
միասին ելեքտական զանգը հնչում ե:



Նկ. 5. Աղավնու աղավնատուն մտնելը

Աղավնիների համար պատրաստած ալդալիսի  
մուտքը կսչվում ե «արկանոց»:



Նկ. 6. Արկանոցի կառուցվածքը

Ծ-րդ նկարի վրա ցույց ե տրված ալդալիսի ար-  
կանոցի կառուցվածքը. լեթե նախնք աղավնատան

ներսից, կտեսնենք, թե ինչպես ե աղավնին աղավնառուն մտնում:

Աղավնին մի ժամում թռչում ե 60—70 կիլոմետր: Բարձրանում ե գետնի լերեսից վատ լեղանակին 100—150 մետր, իսկ լավ լեղանակին 300—350 մետր: Պառավ աղավնիները մեկ թռիչքի ընթացքում կարող են թռչել անշարժ աղավնատներից 500—600 կիլոմետր հեռավորութլուն, այսինքն անալիսի հեռավորութլուն, ինչպիսին գոլութլուն ունի Լենինգրադի ե Մոսկվայի միջև: Շարժական աղավնատների աղավնիները կարող են իրենց կայանը գտնել 30—40 կիլոմետր հեռավորութլուններից:

Ձյունը, մառախուղը ե անձրևը խանգարում են աղավնուն ճանապարհը գտնելու ե պահասեցնում են թռիչքի արագութլունը: Այդպիսի լեղանակին աղավնին կարող ե թռչել շատ ավելի փոքր հեռավորութլուն: Ձմեռը սառնամանիքների ժամանակ աղավնիների թռիչքի արագութլունը, նույնպես ե թռիչքի հեռավորութլունը շատ փոքրանում ե, մանավանդ լերը բացի սառնամանիքից, ուժեղ քամի չե փչում: 15 աստիճան ե ավելի սառնամանիքի ժամանակ աղավնին չի կարող թռչել, հենց դրա համար ել չի կարելի նրան ուղարկել:

Հատկապես սովորեցրած աղավնիները կարող են թռչել նաև գիշեր ժամանակ: Այդ պատրաստութլունը ժամանակ ե պահանջում: Աղավնիներն ամենից լավ են թռչում լուսնյակ գիշերները, բայց կարող են թռչել նաև մութ գիշերները: Սակայն պետք ե վոր աղավնու տեղ հասնելու ժամանակ աղավնատան ներսը ու թռչելու տախտակը (հարթակը) լուսավոր-

ված լինեն: Պատերազմի ժամանակ հրետանական ու հրացանային հրաձգութիւնը, փողին, ծուխը և մառախուղը աղաւնիների թռիչքը չեղին խանդարում: Գաղային դրոհների ժամանակ աղաւնին թեւերի մի քանի թափահարութեամբ դուրս եր թռչում վարակված տեղերից. աղաւնին սատկում եր միայն շատ հազվադէպ դեպքերում:

Փոքրատար աղաւնին ապրում է մոտ 15 տարի, լալ աշխատում է մոտ 10 տարի: Աղաւնուն պետք է տեղափոխել շարժական աղաւնատունը դեռ շատ փոքրը ժամանակ, յերեք շաբաթից վոչ ավելի: 6 շաբաթական հասակից աղաւնիները նոր տեղին դժվարութեամբ են սովորում:

Բոլոր ռադմափոստային աղաւնիները դեռ փոքր հասակում պետք է ողակավորել, ալսինքն ծնվելուց հետո 6-րդ—7-րդ որը պետք է նրանց վոտին ողակ հաղցներ: Ողակը պատրաստում են ալյումինիոնից կամ մի ալլ թեթեւ մետաղից: Ողակի վրա պետք է նշանակված լինեն՝ աղաւնու անձնական համարը, ծնվելու տարեթիւը, աղաւնատան գլխատառը կամ համարը. 7-րդ նկարի վրա ցուցց է տրված ողակն աղաւնու համարով:

Յուրաքանչյուր քաղաքացի, պատահաբար այդպիսի աղաւնի թռչելու դեպքում, պարտավոր է այդ մասին տնհապաղ հայտնել իշխանութեանը:



## ԱՆՇԱՐԺ ՈՒ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՂԱՎՆԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԲԸ

Ռազմական աղավաճումները, ինչպես վերևում հիշված է, լինում են յերկու տեսակի:

Անշարժ աղավաճումներ, վորոնք գտնվում են վորևե քաղաքում կամ բերդում և շարժական—սալլակների կամ ավտոմոբիլների վրա: Շարժական աղավաճումները կարող են շարժվել զորքերի յետևից կարող են հաճախակի փոխել իրենց տեղը:


Անշարժ (մշտական) աղավաճումների համար հաճախ հարմարեցնում են ռազմական շտաբների կամ հիմնարկությունների շենքերի տանիքի տակի տարածությունը: Սակայն ամենից լավն է հատուկ կառուցված աղավաճատուն ունենալ: Այդպիսի աղավաճատունը սովորաբար կառուցում են քաղաքի ծայրամասում, վորպեսզի շրջակայքում բավականին ազատ տեղ լինի:

Աղավաճատունը պետք է կապել քաղաքում տեղավորված զորամասի շտաբի հեռախոսով: Աղավաճումների չափերը լինում են մեծ ու փոքր, նախած նրանց մեջ պահվող թռչունների թվին:

Միջին հաշվով աղավաճիների յուրաքանչյուր զույգի համար տնհրաժեշտ է մեկ խորանարդ մետր ող:

8-րդ նկարի վրա ցույց է տրված ամերիկական ռազմական աղավաճատան ներսի տեսքը: Աղավաճիների յուրաքանչյուր զույգի համար առանձին բուն է հատկացվում, վորի գլխին համար է դրվում: Աղավաճապահը ճիշտ գրանցում է կատարում աղավաճիների կյանքի մասին, թե նրանք յերբ են ձուռած ու

լերը են ճուտեր հանում: Այդ շատ կարեւոր է, վոր պեսզի ամենալավ արուներից ու եգերից ճուտեր ստանանք ու նրանց հետեւենք առաջին հենց որից:



Նկ. 8. Առանձին մշտական կայարան

Յուրաքանչյուր մշտական աղավնատուն աղավնիներ է պատրաստում թռիչքներ կատարելու վորոշ ճանապարհներով, վորոնք պիտի ճիշտ սահմանված լինեն: Սկզբում աղավնիներին սովորեցնում են թռչել աղավնատան գլխին, ինքնուրույն կերպով աղավնատուն մտնել, իսկ հետո աղավնիներին աստիճանաբար հարկադրում են աղավնատուն վերադառնալ հեռվից: Աղավնիների ալդպիսի պատրաստութլունը հեշտ գործ է և մեծ համբերութլուն, հմտութլուն ու ժամանակ է պահանջում:

Յերբ աղապնինները խմբով արդեն ազատ թռչում են աղապնատան վերևում, նրանց հարկադրում են վորոշ ժամանակ ուղում մնալ, թույլ չեն տալիս աղապնատուն իջնել, վորպեսզի նրանք ընտելանան ավելի յերկար ժամանակ թռչելու, շրջապատող վայրիդ ծանոթանան և ամբարնդվեն: Աղապնինների թռչելու ալդ ժամանակամիջոցը աստիճանաբար ավելացնում են, վորպեսզի աղապնիններին չհոգնեցնել ու նրանց թույլ չտալ վորևե ալլ տեղ իջնել, բացի իրենց աղապնատան կտրից:

Մեծ հեռավորութլունների վրա թռիչքներ կատարելու համար պետք է ընտրել ամենապարզ որերի առավոտները, յերբ աղապնինները շատ հեշտութլամբ կարող են վալրը ճանաչել: Թռիչքներն սկսում են վոքը հեռավորութլուններից ու աստիճանաբար ավելացնում: Անշարժ աղապնատների մատղաշ աղապնինների թռիչքների հեռավորութլունը հենց առաջին որվա ընթացքում կարելի յե հասցնել մինչև 100 կիլոմետր: Պատավ աղապնինների թռիչքները կարելի յե կատարել ավելի մեծ հեռավորութլունների վրա:

Աղապնիններին հատուկ կողովների մեջ տանում են վորոշ ուղղութլամբ ու հետո բաց են թողնում: 10 կիլոմետրից սկսած արդեն անհրաժեշտ է ճիշտ գրանցում կատարել, թե յերբ է բաց թողնվել աղապնին: Աղապնու բոլոր թռիչքները գրանցում են հատուկ թերթի վրա, վորպեսզի հնարավոր լինի պատրաստութլունն ավելի կանոնավոր կերպով իրադործել:

Անշարժ կալարաններն աղապնինների ուսուցումը շարունակ վարում են աղապնինների ահն կալարանների կամ քաղաքների միջև, վորոնք ճիշտ սահմանված


են: Աղաժնիներին պետք է աստիճանաբար ընտելաց-  
նել ավելի լերկար ժամանակ նստելու ալն կողովնե-  
րում, վորոնց մեջ նրանց տանում են բաց թողնելու  
տեղը:

Ակզբում աղաժնիներին պահում են կողովների  
մեջ մի քանի ժամ, հետո մեկ, լերկու որ և աստի-  
ճաբաբար ալդ ժամանակամիջոցը հասցնում են մինչև  
2 շաբաթ և ավելի:


Ակզբում աղաժնիներին բաց են թողնում փոքր  
խմբերով, հետո 4—2 աղաժնի միասին և վերջապես  
մեկ-մեկ: Յերբ աղաժնիները բավականին կընտելա-  
նան, նրանց պետք է սովորեցնել թռչելու վատ լե-  
ղանակին—անձրևի, ձյան, քամու, մառախուղի ժա-  
մանակ և իրիկնապահին: Ապա աղաժնիներին ընտե-  
լացնում են մարտական պարագային, նրանց տեղա-  
փոխելով կողովների մեջ ամեն լեղանակով, ընտելաց-  
նում են հրետանական հրաձգությանը, սավառնակ-  
ներից բաց թողնելուն և այլն:

Անշարժ կայարանների աղաժնիներին կարելի լի  
տալ ալն զորամասերին, վորոնք մարտական գործո-  
ղություններ են կատարում ալն աղաժնատների շրջա-  
նում, վորոնցից տեղի լի ունեցել աղաժնիների պատ-  
րաստությունը ալդ վայրում թռիչքներ կատարելու  
համար: Հատկապես կարևոր է աղաժնիներին ընտե-  
լացնել թռիչքներ կատարելու հետախուզական ու  
ռմբակոծող ոդանավերից, նուկնպես և հեծելազորի  
մասերից:

9-րդ նկարի վրա ցույց է տրված զեկուցագրեր  
բերող փոստատար աղաժնիների վերադարձը լեհական  
ռազմական անշարժ աղաժնատներում աղաժնիների խմ-



բով թռիչքներ կատարելու պատրաստութիւն ժամանակ:




Նկ. 9. Զեկուցադրեր բերող փոստատար աղաժնիների վերադարձը (Եհական բանակում)

Շարժական ուղղմական աղաժնատները պետք է ընդարձակ լինեն, նույնպես և թեթև ու կալուն լինեն՝ գործերի լեռներից գետնուղիներով շարժվելու համար:

Աղաժնիների բնակութիւն համար ավտոմոբիլ կամ լերկանիվ են հարմարեցնում, իսկ լերքեմն ել քառանիվ սալակ: Աղաժնատան ներսում բների համար արկղներ են սարքում:

Սալակի կամ ավտոմոբիլի լերկու կողմում պատուհաններ են շինում, վորոնք ծածկվում են ցանց քաշած լեռ ծալովի շրջանակներով: Արկանոցը կա-

հուլիսում են հիշտ ալնպես, ինչպես մշտական կառ-  
րաններում զանգակած աղավնու վերադարձի մասին  
աղավնապահին հայտնելու համար: 10-րդ նկարի վրա  
ցույց է տրված ամերիկական բանակի առանձին շար-  
ժական աղավնատուներ: Այդ աղավնատուներ փոխա-  
դրության համար կպցնում են բեռնատար ավտոմո-  
բիլին:



Նկ. 10. Առանձին շարժական աղավնատու

Աղավնիների պատրաստութիւնը (սովորեցնելը)  
շարժական աղավնատներից թռիչքներ կատարելու  
համար շատ դժվար է, վորովհետև անհրաժեշտ է այդ-  
պիսի պատրաստութիւնը կատարել նոր, աղավնու  
համար անծանոթ վայրում և ամենակարճ ժամանա-  
կամիջոցում:

Պատերազմի ժամանակ զորքերը հաճախակի ա-

բազ տեղափոխութիւններ են կատարում և այդ պատ-  
ճառով աղափնիների պատրաստութեան համար կարելի  
կլինի տալ շատ կարճ ժամանակ: Վորպեսզի աղափ-  
նիներն ընտելանան շարժական աղափնատներից աշ-  
խատելուն, այդպիսի աղափնատները պետք է, վորքան  
հնարավոր է, իրենց տեղերը հաճախ փոխեն և յուրա-  
քանչյուր տեղում աղափնիների պատրաստութեան  
աշխատանք տանեն: Յեթե շարունակ այդպիսի աշխա-  
տանք կատարենք, այդ դեպքում աղափնիներն աստի-  
ղանաբար ընտելանում են թռիչքներ կատարելու, ա-  
մեն անգամ նոր տեղում, ընտելանում են իրենց ա-  
ղափնատանը և շարժական աղափնատներից փորձված  
թռչող են դառնում:

Աղափնիների շարժական աղափնատներից թռիչք  
կատարելու պատրաստութեան ժամանակ ուղղում վաչ-  
րի վրա բաց տեղեր է ընտրվում, իսկ հետո վարժու-  
թիւնները կատարում են կտրուկ վալրում, աչսինքն  
բլրավետ և խորթուբորդ վալրում: Պետք է խուսափել  
անտառոտ տեղերից, վորովհետև անտառներում ամե-  
նից հաճախ են լինում բազներ և ուրուրներ, վո-  
րոնք կարող են հեշտութեամբ վոչնչացնել մատաղ ու  
անփորձ աղափնիներին:

Սկզբում աղափնատները տեղափոխութիւններ  
են կատարում փոքր՝ 100—300 մետր հեռավորութիւն-  
ների վրա, ընդվորում յուրաքանչյուր կանգառման  
տեղում աղափնիներին հնարավորութիւն է տրվում  
վալրին ծանոթանալու: Հետո աղափնատների տեղա-  
փոխութիւնների հեռավորութիւններն աստիճանա-  
բար ավելացվում են: Սկզբում, լերը աղափնատունը  
լցված է մատաղ աղափնիներով, աղափնատան տեղա-

փոխութիւնները պետք է, վերջաւան հնարավոր ե, հաճախ կատարել, վորպեսզի աղաժնիները լավ ընտելանան տեղափոխութիւններին և շատ չկապեն մի վորովե վայրի հետ մի տեղում չերկար ժամանակ կանգնելու ընթացքում:


Շարժական աղաժնատան աղաժնիների բաց թողնելը կատարվում է աստիճանաբար, 300 քալից սկսելով, հետո 800 քալի վրա, 1—2 կիլոմետրի վրա, ապա 3—5 կիլոմետրի վրա, վերջապես 10—15 և ալդպես մինչև 35—40 կիլոմետրի վրա: Իհարկե 40 կիլոմետր հեռավորութեան վրա թռիչքները հնարավոր կլինի միայն չերկրորդ, չերրորդ տարվա ընթացքում և ավելի ուշ:

Շարժական աղաժնատան աղաժնիների ընտելացումը մարտական պարագային կարևոր նշանակութիւն ունի, վորովհետև հենց ալդ պարագայում էլ նրանք պետք է իրենց ամբողջ աշխատանքը տանեն: Ալդ պատճառով շարժական աղաժնատների աղաժնիներին զորաշարժերի և դաշտային պարապմունքների ընթացքում պետք է բաց թողնել հրետանական և հրացանային հրաձգութեան ժամամակ, հրետանական սովիգոններում (հրետանական հրաձգութիւնների համար հատկացրած հատուկ դաշտեր), ողանավերից, բացի ալդ ձիավորները տանում են աղաժնիներին կողովների մեջ վորոշ հեռավորութիւնների վրա, վորպեսզի աղաժնիներին ընտելացնեն ցնցումներին և ալն:

Աղաժնիներին ողանավերից ուղարկելու համար նույնպես պատրաստութիւն է հարկավոր: Ողանավերից ու կապովի ողապարիկներից կապի համար աղաժնիներ ուղարկելը շատ կարեւոր է: Մեկ շարժա-

կան ֆրանսական աղավաճառուն 1916 թվին 6 ամսվա ընթացքում ստացել և աղավաճները բերած 24 զեկուցագիր աչն ուղանավերից, վորոնք գերմանացիների կողմից գերել ելին վերցված լեղել, կամ վորոնց հետ զժբախտ պատահարներ են տեղի ունեցել: Կարեվոր զեկուցագրերը նույնպես շատ և ուղարկված լեղել ուղանավերից, նրանց կողմից հակառակորդի դասավորության վերելում թռիչքներ կատարելու ժամանակ:

Ուղանավն աղավաճ միջոցով պետք և ուղարկել աչնպիսի զեկուցագրերը, վոր չի կարելի ուղարկել ռադիոյի միջոցով: Ուղանավը, աղավաճ միջոցով զեկուցագիր ուղարկելով, շարունակում և իր թռիչքը:



Նկ. 11 Ուղանավից աղավաճ միջոցով զեկուցագիր ուղարկելը (լեհական բանակ)

11-րդ նկարի վրա ցույց և տրված ռազմական ուղանավից զեկուցագիր տանող աղավաճն բաց թողնելը: Աղավաճն բաց թողնելու ժամանակ ուղանավը պետք և դանդաղեցնի իր թռիչքը մի քանի վայրկյա-

ին ընթացքում և աղավնուն ախպես բաց թողնի, վոր նա ողանավի պրոպելլերից (պտտատակից) առաջացած ողի ուժեղ հոսանքի մեջ չընկնի: Պրոպելլերը առջևից ունեցող ողանավերից աղավնուն բաց թողնելը հեշտ և կատարվում: Իսկ չեթե ողանավի պրոպելլերը լետեիցն է, պետք և հատուկ հարմարանք լինի աղավնուն կողովի մեջ պրոպելլերից ցած իջեցնելու համար: Գիշերը կամ մառախուղի ժամանակ ողանավից աղավնիներին բաց չեն թողնում, վորովհետև աղավնին այդ դեպքում շուտ չի վերադառնա իր աղավնատունը (մյուս ուրը կամ ավելի ուշ):

Աղավնիների պատրաստութունը՝ ողանավերից թռիչքներ կատարելու համար, նույնպես աստիճանաբար և տեղի ունենում, աղավնիներին սկզբում բաց թողնելով աղավնատնից փոքր հեռավորության և փոքր բարձրության վրա:

Ժամանակի ընթացքում ավելացվում են ինչպես հեռավորութունը, ախպես ել բարձրութունը:

## **ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՎԱՏՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ**

Պատերազմի ժամանակ աղավնիները կարող են կապի ծառայութուն տանել առաջավոր հետևակ մասերից և հրետանական դիտակետերից—գնդերի շտաբները, հեծելական հետախուզական մասերից—դիվիզայի կամ կորպուսի շտաբը, նույնպես և անշարժ մշտական աղավնատները:

Աղավնիները, բացի այդ, շատ լավ կապի միջոց են հանդիսանում տանկերի ու զրահապատ ավտոմոբիլների և նրանց ուղարկող շտաբների ու հե-

տեվակ մասերի միջև։ Աղալմնիները միջոցով նույնպես շատ հաջող կերպով կարող են զեկուցագիր ուղարկել դեպի առաջ ճանապարհված գրահապատ գնացքը։ Բացի այդ, փոստատար աղալմնիները շատ արժեքավոր ծառայութիւններ են մատուցանում նաև ծովալիւն տորմիդում։ Նրանք զեկուցագրեր են բերում, տեղ հասցնում ռազմական նավերից բերդի շտաբը։ Համաշխարհային պատերազմի ժամանակ Սև ծովի վրա դեպք է լեղել, յերբ ռուսական սկանանավից (մինոնոսեց) զեկուցագրով ուղարկած աղալմնին վաղուրոք նախադգուշացրել են տաճկական ռազմական նավախմբի մոտենալու մասին։ Ականանավի վրայի ռադիոն աշխատելիս չի լեղել և այլ յեղանակով զեկուցագիր ուղարկելու հնարավորութիւն չի լեղել։

Ռազմափոստային աղալմնիները պետք է աշխատեն ալն ժամանակ, յերբ կապի ալլ միջոցներ չլան կամ սարքին չեն և չեն կարողանում աշխատել։

Անշարժ կայարաններից մեծ հաջողութեամբ կարելի յե աղալմնիների միջոցով կապ հաստատել հակառակորդի կողմն ուղարկած գաղտնի հետախուզչների (լրտեսների) հետ։ Այդպիսի գաղտնի հետախուզչներին աղալմնիներ են տալիս հատուկ կողովները մեջ կամ նրանց տանում են ծոցում գրած։ Հարկ չեղած դեպքում զեկուցագիր են ուղարկում աղալմնիների միջոցով։ Մանավանդ հարմար են ալնալիսի կապ հաստատել գաղտնի հետախուզչների հետ ալն դեպքերում, յերբ մենք նահանջում ենք և թողնում ենք մեր յերկրի մի մասը, վորը գրավում է հակառակորդը։ Այդ դեպքում աղալմնիներին թողնում են հետախուզչների մոտ։ Յերբ հակառակորդը մեր յերկրով

առաջ ե շարժվում, հակառակորդի թիկունքում մնացած հետախուզներն աղավիններին ուղարկում են հակառակորդի գլխի վրայով:

Համաշխարհային պատերազմի ժամանակ աղավիններին այդպիսի կիրառման շատ դեպքեր են լեղել ավաստիացիների և գերմանացիների կողմից: Մեր ճակատում նշդ հատկապես աչքի չեր ընկնում Բրուսիլովյան հարձակման ժամանակ, չերբ ուսանկան զորքերն առաջ ելին շարժվում և գրավում աչն տեղերը, վորոնք գրանից առաջ գրավված են լեղել ավաստիացիների կողմից: Ամեն առավոտ մեր խրամատների գծերի վրայով փոստատար աղավիններ ելին թռչում միևնույն ուղղութիւններով: Զինվորներն այդ աղավինների վրա հրացանային կրակ ելին բացում, բայց, իհարկե, թռիչքի ժամանակ թռչունին դիպցնելը դժվար եր, հաջողվել ե սպանել միայն մեկ աղավին: Մեր թիկունքում կատարած խուզարկութիւնները նույնպես հաջողութիւն չունեցան, վորովհետև աղավիններին գտնելը շատ դժվար եր:

Աղավնատուներ շտաբի հետ պիտի կապված լինի հեռախոսով, վորպեսզի աղավնու գալուց անմիջապես հետո հազորդել, թե նա ինչ ե բերել:


Շարժական աղավնատները տրվում են կորպուսների շտաբներին, դիվիզաների շտաբներին և վորոշ դեպքերում գնդերի շտաբներին աղավնատներ կտրվեն ամենից հաճախ դիրքային պատերազմում: այսինքն չերբ զորքերն անշարժ նստած են խրամատներում:

Շարժական աղավնատներից աղավնիներ պիտի տալ աչն զորամասերին, վորոնց հետ մարտի ժամանակ կապ պահպանելն ամենից դժվար կլինի: Որինակ,

ալն մասերին, վորոնք պահպանում են թեւերը, ալն մասերին, վորնք ուղարկված են հետախուզութան համար, նույնպես և առաջավոր մասերին, վորոնց հետ կապ պահպանելը դժվար կլինի հակառակորդի ուժեղ կրակի պատճառով:

Համաշխարհային պատերազմի ժամանակ ֆրանսիական ճակատում աղավինները հաճախ կապի միակ միջոցն են լեղել ուժեղ հրետանական կրակի ժամանակ: Բոլոր լարային գծերը փչացած ելին, լուսատու լապտերները չեղին կարողանում աշխատել, վորովհետև փողու և ծխի պատճառով վոչինչ չեր լերելում: Մարդիկ չեղին կարողանում ղեկուցագրերը տեղ հասցնել, վորովհետև սպանվում ելին գնդակներով և արկերով:

Շարժական աղավնատուները զորամասերին աղավնու պոստեր և տալիս: Այդ պոստերին տրվելիք աղավնիների թիվը կախված է պոստի կարելորութիւնից: Աղավնիներն ուղարկվում են պոստերին պոստային կողովների մեջ (տ. նկ. 12):



Նկ. 12 Կողով շարժական պոստի համար

Պոստալին կողովները աղավիններով կարելի չե փոխադրել Թուլցիկ փոստով, մոտոցիկլետներով և այլն: Այդ պոստալին կողովները պետք է տեղավորել կրակից ծածկված և չոր շենքերում: Բացի այն կարմիր բանակայիններից, վորոնց հանձնված է պոստը, վոչվոք աղավիններին չպետք է ձեռք տա: Պոստում լեղած կողովների միջի աղավիններին պետք է կիսակուշտ կերակրել, վորպեսզի նրանք աշխատեն շուտով տուն հասնելու, վորտեղ նրանց համեղ կերակուր է սպասում: Յեթե կարելի չե գազային գրոհ սպասել, այդ դեպքում աղավնու պոստերի համար հատուկ կողովներ են տալիս, վորոնք պաշտպանում են աղավիններին դաղերի ներգործությունից: Այդպիսի կողովներում աղավիններին չպետք է պահել շատ լերկար ժամանակ և սովորաբար փոխում են ամեն անգամ 10-12 ժամ անցնելուց հետո: Համաշխարհային պատերազմի ժամանակ ֆրանսիացիների մոտ աղավինները մնում ելին կողովների մեջ լերքեմն 2 ուր, բայց այդ հնարավոր է դիրքային պատերազմի անշարժ պայմաններում:

Աղավնու անշարժ պոստերում, յեթե շենքը չոր և հարմար է, աղավինները կարող են կողովներում մնալ 2 շաբաթ և ավելի, մանավանդ յեթե սլառավ ու փորձված աղավիններ են:

Պոստերում աղավինների փոխումը կատարվում է գիշեր ժամանակ, յերբ աղավինների նոր պարտիան կարելի չե աննկատելի կերպով առաջավոր դիրքերը բերել:

12-րդ նկարի վրա ցույց է տրված հետևակ մասերին տրվող աղավնու շարժական պոստի կողովը:

13-րդ նկարի վրա ցույց է տրված ամերիկական գին-  
վոր, վորը մեջքին կողով է կրում 4 փոստատար ա-  
ղափնի տեղափոխելու համար:

Բացի այդ, աղափնիներին՝ թեվերը կապված կա-  
րելի չե փոխադրել հետախուզների կաշնպարկերում,  
գրպանում, ծոցում: Բայց, իհարկե, նրանք այդպիսի  
դրուժյան մեջ չերկար ժամանակ չեն կարող մնալ:

Աղափնուն զեկուցադրով բաց թողնելու հրա-  
մանը տրվում է այն ավագ պետի կողմից, վորի տե-  
ղամասում գտնվում է աղափնու պոստը, որինակ՝  
վաշտի հրամատարի, հետախուզուժյան պետի, գու-  
մարտակների հրամատարների կողմից և այլն: Այդ  
կատարվում է նրա համար, վորպեսզի զեկուցադիրը  
աղափնիների միջոցով ուղարկեն միայն այն ժամա-  
նակ, չերբ այլ միջոցներով ուղարկել չի կարելի: Միշտ  
պետք է հիշել, վոր աղափնին կապի վերջին միջոցն  
է, վոր կազատի առաջավոր մասը ամենա-  
դժվար պայմաններում: Յեթի պոստում շատ աղափնի



Նկ. 13.



Նկ. 14.

կա և կարեւոր զեկուցագիր և ուղարկվում, այդ դեպքում զեկուցագիրը կարելի չե ուղարկել միանգամից լերկու աղավնու միջոցով: Յերկրորդ աղավնուն բաց են թողնում առաջինից մոտ մեկ բուլե հետո, լերբ առաջինն արդեն թռել, բարձրացել և:


14-րդ նկարի վրա ցույց է տրված ամերիկական հեծելակը, վսրը մեջքին աղավնու կողով և կրում 2 աղավնու համար: Հեծելադեղքերին աղավնիներ տալը շատ կարեւոր նշանակութուն ունի: Ամենադժվարը հետախուզութունից զեկուցագիր ուղարկելն է: Հեծելական հետախուզութունը հաճախ շատ բան է տեսնում, բայց չի կարողանում հաղորդել, թե ինչ է տեսնում, կամ այդպիսի զեկուցագիրը ձեռովոր լրատարի միջոցով շատ դանդաղ և գնում: Իսկ փոստատար աղավնիների միջոցով զեկուցագիրը կգնա մեկ ժամում, 60 կիլոմետր արագությամբ, դեպի աղավնատունն ուղղակի ուղղությամբ:

Փոստատար աղավնիներով կարելի չե ուղարկել վոչ միայն փոքր կարճ զեկուցագրեր, այլ և վայրի փոքր սքեմաներ (գծանկարներ):

Յեթե աղավնու միջոցով ուղարկվող բեռան քաշը 25 գրամից ավելի չե, այդ դեպքում բեռը պետք է տեղավորել աղավնու մեջքին:

15-րդ նկարի վրա ցույց է տրված աղավնին լրիվ հանդերձանքով, այսինքն նրա վոտին ամրացված է խողովակը զեկուցագրով, իսկ լերկրորդ զեկուցագիրն ամրացրած է մեջքին նույնպես խողովակի կամ հա-

տուկ գրպանի մեջ և պահվում ե կաշեպարկի պես  
թևերի տակը գցած հատուկ մերքերով:



Նկ. 15. Աղավին լրիվ հանդերձանքով

Վերջացնելով մեր խոսքը ուսումական ծառայության  
մեջ գտնվող աղավինների մասին, պետք ե ավելացնել,  
վոր.

Փոստատար աղավինները պատերազմի ժամա-  
նակ հիանալի կապի միջոց են հանդիսանում: Նրանք  
արագ են շարժվում և կրակից շատ քիչ կորուստ են  
ունենում: Փոստատար աղավինները պատերազմի ժա-  
մանակ հազարավոր մարդկային կյանքեր են փրկում,  
վորոնք, իբրև լրատարներ, պետք ե զեկուցագրեր տա-  
նելին: Փոստատար աղավինները հաճախ միակ մի-  
ջոցն են հանդիսանում, վորն աշխատում ե այն ժա-  
մանակ, լերբ մնացած բոլոր միջոցներն արդեն հնա-  
րավորութիւնն չունեն աշխատելու: Յեթե աղավնա-  
պահության գործը կանոնավոր հիմքերի վրա յե դը-  
րած, աղավիններն եժան կլինեն, նրանց կերակրելը

Թանգ չի նստի, իսկ լեթե աղալնապահները լավ պատրաստութիւն և ծանօթութիւն ունենան աղալնու ռազմափոստալին գործի մասին, նրանց խնամովը և կանոնավոր ոգտագործումը նուրնպես դժվար չեն լինի:

## ՌԱԶՄԱՓՈՍՏԱՅԻՆ ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 1914 - 1918 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Ինչպես ե կիրառվել ռազմական աղալնու փոստը համաշխարհային պատերազմի ժամանակ, այդ մասին ասում ե Վերդենի բանակի հրամատարի 1916 թ. ոգոստոսի 13-ի № 743 ղեկուցագիրը: Այդ ղեկուցագիրը վերջանում ե այսպես: «Զնայած ձեռք տռած նախազգուշական միջոցներին, հակառակորդի փոթորկալին կրակի և անբարեհաջող լեղանակի պատճառով, գործող մասերի հետ գոլութիւն ունեցող կապի միջոցների մեծ մասը անբավարար ե լինում և ամենադժվար ժամանակ մերժում ե աշխատելու: Փորձերը ցույց են տալիս, վոր գրոհի ժամանակ հեռախոսային կապը խախտվում ե. արագագնացների (վազանների) միջոցով ուղարկած ղեկուցագրերը մեծ ուշացումներով են ստացվում ճանապարհների դժվարութիւն և խափանիչ կրակի ուժի պատճառով, տեսողական ազդանշանները ծխի և փոշու պատճառով չեն գործում, ուղալին դիտողութիւնը շատ դեպքերում խանգարվում ե վատ լեղանակի ու դիտողութիւն նպատակների մեծ հեռավորութիւն պատճառով: Միայն փոստատար աղալնիներն են աշխատում ամեն մի պարագայում և, չնայած հրետանական կրակին, փոշուն, ծխին ու մա-

ուսխուղին, համեմատաբար շատ արագ բերում են ճիշտ տեղեկություններ գործող զորքերի դրության մասին»:

Ահա մի քանի նմուշներ ռազմա-փոստային աղափնիների կիրառման վերաբերյալ Ֆրանսական բանակում Վերդեն բերդի մոտ և Սոմմ գետի վրա տեղի ունեցած մարտերի ժամանակ:

1) 1916 թ. հունիսի 1-ին Տիո—Վո ճակատի վրա գերմանական զորհի ժամանակ գումարտականների և գնդերի հրամատարները միմիայն աղափնու փոստի միջոցով եյին տեղեկություն տալիս զորհի ընթացքի մասին և ոգնություն ու հրետանու ոժանդակություն խնդրում, կապի մյուս բոլոր միջոցները չեյին կարողանում աշխատել:

2) Հունիսի 2-ից մինչև 5-ը մայր Ռեյնայի գեղուցազրեը, վար ստացվում եյին աղափնիների միջոցով, հնարավորություն եյին տալիս հետևել գերմանացիների կողմից կարած Վո ամրոցի հերոսական կայազորի գերմարզկալին ճիգերին:

3) Հունիսի 9-ին ամենահակասական տեղեկություններ են դալիս Տիոմոն Ֆիրմայի (ագարակի) զրավելու մասին, և կապիտան Մոնտարբիլին հանձնարարվում Ե հետախուզություն կատարել: Նա մեկնում Ե 2 աղափնի հետն ունենալով: Ժամի 16-ին կապիտ. Մոնտարբիլին հասնում Ե իր զորքերի դասավորման տեղը Ֆիրմայից դեպի հյուսիս-արևելք և այստեղից աղափնի չե ուղարկում: Ժամի 16-ից 8 բուպե անց աղափնին հասնում Ե աղափնատունը, ժամի 16-ից 10 բուպե անց գեղուցազիրը հեռախոսով հաղորդվում Ե հրամատարությանը: Ֆիրմայի շուրջն անցնելով,

կապիտան Մոնտարբին ժամի 16-ից 10 բոպե անց հասնում է հետևակի դասավորութեան տեղը, Ֆիլմա-լից դեպի հարավ-արևմուտք 500 մետրի վրա և յերկ-րորդ զեկուցագիրն ուղարկում: Աղալինն աղալնա-տունն է հասնում, նույնպես արագ, ինչպես և առա-ջինը, ժամի 16-ից 18 բոպե անց. ժամի 16-ից 20 բոպե անց, աղալինների շնորհիվ, հրամատարութունն արդեն իմանում էր այն ամենը, ինչ վոր կատարվում էր ճակատում և կարող էր միջոցներ ձեռք առնել.

4) Հունիսի 12-ին 410 հետևակ գնդի ղեկը գրոհից հետո, վիրակապական կայանը բազմաթիվ վիրավորներ են բերվում և մնում են այնտեղ փոխա-դրական միջոցների բացակայութեան պատճառով. գնդապետ Գուլենլուն աղալին չե ուղարկում ժամի 8-ից 20 բոպե անց: Ժամի 8-ից 45 բոպե անց ղեկի-զիային լազարեթը (հիվանդանոցը) տեղեկութունն է ստանում ու սանիտարներն է ուղարկում և այդպիսի ժամանակին արված կարգադրութունը շատ կյանք է ազատում:

Ուժեղ հրետանական կապի պատճառով, այլ տե-սակի կապ հաստատելու վոչ մի հնարավորութուն չկար:

5) Հունիսի 21-ից մինչև 23-ը գերմանացիները բացառապես ուժեղ զրոհ տվին: Բոլոր հեռախոսային հաղորդակցութունները ավերված էին, յերեք շերտ խափանիչ կրակը թույլ չէր տալիս արագագնացնե-րին շարժվելու, անհետևանք կիրառվող տեսաբանա-կան կապը մեկ ոֆիցերի (սպայի) և 3 ղինվորի կյանք է խլում: 67 հետևակ գնդի հրամատար փոխգնդապետ Ժիրարդոնի տրամադրութեան տակ այլ տեսակի կապ

չէր մնացել, բացի աղավնու փոստից, վորը և նա  
ոգտագործում ե: Նրա ղեկուցադրերը շտաբ հասան  
20-ից մինչև 25 բուլեւի ընթացքում: Շտաբը տեսա-  
բանական ազգանշանների միջոցով նրան տեղեկու-  
թյուն ե տալիս, վոր ղեկուցադրերն ստացված են և  
նրան ոգնություն կհասցվի, 67 գունդը կատաղի դի-  
մադրություն ե ցույց տալիս մինչև ոգնության տեղ  
հասնելը: Միևնույն ժամանակ հակառակորդն աշխա-  
տում ե Ֆրոնտեր ամրոցը վերցնել, ամրոցի հրամա-  
տար կապիտան Դարդիգը իր տրամադրության տակ  
միմիայն աղավնու փոստ ունի, հունիսի 23-ին ժամի  
9-ին նա տեղեկություն ե տալիս, վոր հակառակորդը  
500 մետրի վրա չե գտնվում, ժամի 10-ին նա հայտ-  
նում ե ամրոցի շրջափակման, գնդացրային աշտա-  
րակների ավերման մասին, խնդրում ե հակադրոհի  
մասին և հաստատում ե, վոր կապաշտպանվի մինչև  
վերջը. ժամի 11-ին աղավնի չե ուղարկվում, վորը  
հաղորդում ե, վոր գրությունն ամեն բուլե ել ավելի  
չե լուրջանում, բայց տրամադրությունը շատ բարձր  
ե և բոլորը կկռվեն մինչև վերջը: Հրամատարությանը  
հաջողվում ե այդ քաջերին ազատել: Հունիսի 24-ին  
բժշկի ոգնական Ռու-ի կողմից ուղարկված չորրորդ  
աղավնին հաղորդում ե, վոր ամրոցն ազատված ե,  
բայց առանց կապի և հաղորդակցության ե մնացել:  
Նա խնդրում ե հաջորդ գիշերն անհապաղ ուղարկել,  
վորքան հնարավոր ե շատ սանիտար և աղավնի: Հու-  
լիսի 11-ին գերմանացիների կողմից նորից մեծ ջան-  
քեր են թափվում Ֆրոնտերի կատարից մինչև Ֆլե-  
րի գլուղը տեղամասի վրա: Բոլոր հեռախոսային գը-  
ծերը փչացած են, ծխի պատճառով տեսաբանական

ազդարարությունն անհնարին ե դառնում, բայց զանազան տեղերից աղավինների բերած 10 զեկուցագիրը հրամատարությանը հնարավորություն են տալիս մարտի դարգացմանը հետեւելու և անհրաժեշտ կարգադրություններ անելու:

6) Հուլիսի 12-ին շարունակվում ե Սուվիլլ ամրոցի գրոհը: Ամրոցի ներսը հակառակորդի ներխուժած մասերը կամ վոչնչացված են, կամ գերի լեն վերցված: Բնլվիլում գտնվող դիտողն իր ժամանակին տեղեկութուն և տվել գերմանացիների ամրոցին մոտենալու մասին և դրանից հետո ամրոցի ներսում տեղի ունեցած ձեռքի նռնակներով կռիւ մասին, բայց նա չկարողացավ տեղեկութուն տալ բռնամարտի հետեանքի մասին: Աղավիններով ուղարկած 12 հեռագիրը նկարագրում են դրությունը, հաղորդում են գերմանացիներին գերի վերցնելու մասին, ճիշտ հաղորդում են կողմերի փոխադարձ դրության մասին, ցույց են տալիս վտանգավոր կետերը և հրետանու համար նպատակները:

7) Հուլիսի 15-ին տեղի լե ունենում ֆրանսիացիների հակադրոհը: Գրոհող մասերի կողմից աղավինների միջոցով մեկը մյուսի հետեից ուղարկված 10 տեղեկութունը հնարավորութուն են տալիս դատել հակադրոհի զարգացման մասին և այլն:

Այստեղ մի քանի որինակներ են վերցված ֆրանսական վերդենի բանակի հրամատարի զեկուցագրերից. ալգլիսի որինակները հարյուրից ավելի լեն: Դաշնակիցների (Ֆրանսիա, Անգլիա, Ամերիկա) բանակներում 300,000 աղավինի լե լեղել, իսկ գերմանացիների մոտ—150,000 աղավինի:

Մյուս բանակներում նույնպես շատ որինաններ են լեղել աղափնիների հիանալի մարտական աշխատանքի: Հյուսիս—Ամերիկյան Միացյալ Նահանգների բանակում, վորն աղափնիներ ե պահում միայն 1917 թվից, մի շարք դեպքեր են արձանագրված, յերբ աղափնիները փրկում են դրությունը: Մանավանդ աչքի յեն ընկել յերկու աղափնի, վորոնց անունները հիշատակված են ռազմական աղափնու գործի պաշտոնական հրահանգի մեջ. որինակ, «Նախագահ Վիլյամս».— 1918 թ. նոյեմբերի 5-ի առավոտյան, այդ թռչունը գնդակով վիրավորված վտռով, խիտ ամպի միջով յեկել ե իր աղափնատունը և կարելոր հեռաքիր ե բերել: Այդ լեղել ե նրա յերկրորդ թռիչքն այդ ճակատում:


«Մադրածու».—Շրապներով վիրավորված աչքով և չորացած արյունով ծածկված գլխով ճակատից տուն ե վերադարձել 1917 թ. սեպտեմբերի 12 վաղ առավոտյան: Այդ թռչունը շատ կարելոր հեռաքիր ե բերել, վոր տեղեկություն ե տվել դեպի առաջ դուրս բերած ծանր մարտկոցների մասին. այդ մարտկոցները սարսափելի ավերումներ պիտի անելին հարձակվող ամերիկական ջոկատների շարքերում: Այդ տեղեկությունն ամերիկական հրետանուն հնարավորություն ե տվել 20 բոպելի ընթացքում լռեցնել հակառակորդի հրանոթները:

Ռուսական բանակում ռազմա-փոստային աղափնու հաջող կիրառման դեպք ե լեղել 1915 թվին Նովո-Գեորգիյեվսկ բերդի պաշարման ժամանակ: № 10 ամրոցի վրա գերմանացիների կողմից գրոհ տալու ժամանակ հեռախոսը կտրված ե լեղել, գնդացրային և հրետանական ուժեղ կրակի պատճառով լրատարներ ուղարկելու հնարավորություն չի լեղել և միայն փոստատար աղափնի ե ամրոցի պարետի գեկուցագիրը հասցրել բերդի պարետին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                  |    |
|----------------------------------|----|
| Փաստատար աղավինն և նրա հատկու-   | 62 |
| թյունները . . . . .              | 3  |
| Անշարժ և շարժական աղավնատների    |    |
| կառուցվածքը . . . . .            | 14 |
| Աղավինների ծառայութունը ճակատում |    |
| պատերազմի ժամանակ . . .          | 23 |

—\*—









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038314

[084]

ЧЕТВЕРТОЕ ИЗДАНИЕ

A <sup>I</sup> 4069

В. ЦЕЙТЛИН

Г О Л У Б И  
НА  
ВОЕННОЙ СЛУЖБЕ